ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2014թ. N 204

ք. Արմավիր

«ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի վեցերորդ մասով, 67-րդ հոդվածի առաջին մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N1572-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի և «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի միջև 2012 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված դրամաշնորհի տրամադրման մասին պայմանագիրը.

որոշում եմ՝

1. «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնել չորս միլիոն Հայաստանի Հանրապետության դրամով 800 (ութ հարյուր) հատ լրացուցիչ սովորական (հասարակ) բաժնետոմսեր (5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով) տեղաբաշխելու միջոցով:
2. Հաստատել «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ կանոնադրական կապիտալը՝ 136270000 (մեկ հարյուր երեսունվեց միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի քանակը՝ 27254 (քսանյոթ հազար երկու հարյուր հիսունչորս) մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն փոփոխությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 2007 թվականի հունիսի 4-ին) բաղկացուցիչ մասը:
4. Հանձնարարել «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին (Մ. Վանյան)՝ ընկերության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արմավիրի տարածքային բաժնում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**